ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

« 13 » հուլիս 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 3091-1-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, վերանայելով ֆիզիկական անձ Գագիկ Ավետիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմված թիվ N3852/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ ֆիզիկական անձ Գագիկ Ավետիսյանի (Հասցե՝ Երևան Ա. Վշտունու 3-րդ նրբ. 12 տուն, ՀՎՀՀ՝ 28012658, անձնագիր՝ ՀԾՀ՝ 2701550106) չկատարված հարկային պարտավորությունը 21.07.2022 թվականի դրությամբ կազմել է 207.360 դրամ, որից հարկ՝ 200.000 դրամ, տույժ՝ 7.360 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 26.10.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 24.11.2022թ. կայացվել է թիվ 3091-Ա որոշումը, որով որոշվել է Գագիկ Ավետիսյանից գանձել 103.680 դրամ պարտավորության գումար՝ 207.360 դրամի փոխարեն:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 24.11.2022 թվականի թիվ 3091-Ա չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

1. Որոշման <<Որոշեցի>> մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ֆիզիկական անձ Գագիկ Ավետիսյանից գանձել 207.360 դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

21.07.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20"04"2022թ	200.000	7.360	-	**207.360**	պետական բյուջե	900008000490

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Մարիաննա Պետրոսյան, հեռ. 011-54-91-91 /91-86/: